



7. ՆԵՐՍՈՅԻ ԼԵՔԻԱԹ

Իրեք ախպեր կէղնին՝ մեծ ախպեր, միջնեկ ախպեր, պզտիկ ախպեր: Պզտիկ ախպեր Ներսես էր, Ներսո կը կանչեն: Ըդոց հեր օր կը մեռնի՝ մեծ մալ ու մուլք կը թողն ժառանգութեն, մեծ ախպեր ու միջնեկ ախպեր խոսք կը կապին մըջ չիրար, օր զՆերսոն զրկին ժառանգութենեն:

Մեծ ախպեր կըսե՝

— Արի զՆերսոն զրկինք ժառանգութենեն:

— Ի՞մալ զրկինք, մեղք չէ՞, — կըսե միջնեկ:

— Դու ընձի լսե, չըս փողմընի, — կըսե մեծ ախպեր:

— Դու գինաս, — կըսե միջնեկ:

ՉՆերսոն կը կանչին:

— Ներսո, դու մեր չըմնուց պզտիկն իս, չէ՞: Պզտիկ պտի մեծերուն լսե, չէ՞:

— Էդմալ է, — կըսե Ներսոն:

— Դու մեր չըմնուց պզտիկն իս, ո՛չ դատեր իս, ո՛չ քրտինք թափի, քրզի ժառանգութեն չը հասնի:

— Յորի՞ն, ես իմ հոր տղեն չի՞մ:

— Տղեն իս, — մեջ զընկնա միջնեկ, — հմա մեր մեծն օղորդ կըսե, չըս դատի, չըս բաների, էլ չորի՞ն պտի հասնի:

— Հմա հմա՞լ, — կըսե Ներսոն:

— Հմա հմալ,— կըսին էրկու ախարտիք,— զքու գլխու ճարտես:

Ներսոյի սիրտ իմալ դանակ զարկին, փարա-փարա էնին, թալին մեկ դեն: Կը մտածե, կը մտածե, իմալ ուր ճար տեսնա, կը թքե վըր ախարտոց, գեղնա չընկնա ճամպա, կէրթա, կէրթա, կը հասնի թուրքի սուլթանի քաղաք. քաղաք մը սի, մեկ անեզր ծով, դես ժուռ գիկա, դեն ժուռ գիկա, խան մե կը գտնա, ըդոր մեկ քոշեն կը սթըրվորի: Մըջ էդ զերզամա խանին, շատ շալակտարներ կապրեն՝ մշեցի, վանեցի, սվազցի, էրզրումցի, ե՛սիմ, հազար տեղից, էկած են խարիրութեն, դատին բանին, բալքի քանիմ՝ փարա ճամպին տուն՝ իդարա էնին:

Մըջ էդ շալակտարներուն Պողոս անունով մշեցի մարդ մե կէղնի, էդի չըմնուց փորձ ու խելոք կէղնի, օր զներսոն կը տեսնա՝ կը կանչե ուր մոտ, կը հարցու:

— Յո՛ւստես իս:

— Մշու դաշտեն,— կըսե ներսոն:

— Ո՞ր դեղեն:

— Թըլա:

— Թի՛լ, հա՛, գինամ, գինամ, քանիմ՝ հաղ էղեր իմ, օր կէրթենք սար վարոց կտրելու: Անուշ գեղ մե:

— Օր էղեր իս, մարդ կը ճանչնա՞ս:

— Չըմ ճանչնա, չընցեր իմ:

Ներսոն խորունդ ա՛խ մե կը քաշե:

— է՛, պատմե սա՛նք, գեղ ի՛նչ ունիս՝ պապ, մամ, ախպեր, քուր:

— Իմ պապ ու մամ մեռեր ին, քուր չունիմ, էրկու ախպեր ունիմ, զիսի չը պահին, զրկեցին մալ ու մլթից, ժառանգութենից, ըսին՝ գնա՛, իմալ գուզիս՝ հմալ ապրի, ես լե թողի հեռեցա:

— Յա՛,— կը զարմանա հալվոր,— էդի մշեցուց չէ՛, ըդոնք քըզի համար մկա մեռուկի հաշիվ ին:

Ներսոն էլման խորունդ ախ մե կը քաշե:

— Ըսկի մը նե՛ղվի, լա՛ո, աստված մեկ դուռ կը փակե՛ հաղար կը բանա: Ծա՛՝ քըզի հեր, դու ընձի տղա:

Ներսո սիրտ կը լցվի, գիլա:

— Մի՛ լա; լա՛ո, մշեցին խոլայի չի՛ լա, աստված օր ստեղծեր է՛ կապրըցու էդ բաժ ու բալեղ օր վըր քըզի է, սար կունաս շըջի, գետ կանգըցու: Բախտի աչքեր, կըսին, փակ է, հմա մեկ-մեկ կը բանա: Գիկա ժամանակ, օր քու ախարտիք պտի չընկնան քու յոտ-

քեր, քրդի հավճա էղնին, բամ'էր ըսի, ես կը մեռնիմ, դու սաղ կը մնաս, կը տեսնաս:

Ներսոն է՝ կէղնի շալակտար, յըմնօր, առավոտ շուտ, հըտ հալ-վորուն կէրթա մայդան, օր գործ-մործ էնե, յիրկուն կը դառնա գի-կա, կը տեսնա հանդե հալվոր շալակտար ուրնե չառեջ էկի, դհացի բողջնն րացեր է, տղին բաքլա կէնե:

— Հա՛յ դու բարո՛վ էկար, նստի, լա՛ո, յորի՛ն յանգըցար:

— Քաղաք թամաշա կէնեք, — կըսե ներսոն:

— Քամբախ մնա քաղաք, հա՛, էդի յուշապ է, ափսոս չէ՛ր դեղ:

— Դու հաց չըս կե՛րբրի:

— Տո՛, յա՛, ես ե՛ր իմ մինակ հաց կերի, բրդուճ իմ բոկ կէրթա՛:

Քանի կէրթա՛ հալվորն ու ներսոն կը տաքնան վըր յիրար, իմալ հեր ու օրդի, հըտ յիրար կէրթան, օր յիրար չը խանգարին՝ ամեն դեն մե կէրթա, գործ էղնի՛ կէնին, յիրկուն կը դառնան գի-կան, կուտին՝ ինչ օր աստվածն է տվի:

Գընցնա մեկ-էրկու տարի՛ ներսոն քանի կէրթա՛ կընտելնա քաղքին, յետին փողոց կը ճանչնա, ու էնքան գործ կէնե, օր շատ հեղ կը բեզրի, շուզե էնե: Օրերուց օր մե յերեսածակուկ խանըմ մե կը մոտենա իդոր, կըսե.

— Զիմ բեռ տար, տղա՛:

— Վուլա, չըմ տանի, բեզրեր իմ, տուն պտի էրթամ:

էդ խանըմ թուրք կէղնի, ուռում, թե՛ յահուդի, ո՛ր գինա, օր դերես կը բացե՛ ներսո շոքեր կը թուլնան: Մեկ բոլոր լուանակ կա-նուկ ուր չառեջ, սե ու մեծ աչքեր իմալ Յալվառընջու խաղող, պըզ-տիկ բերան մե կա վրեն, կըսիս կաքվու բերան, հմալ ջըհել ու խո-րոտ, օր ներսո խելք կը մաղե:

— Դե՛, չըս տա՛նի:

— Կը տանիմ, խա՛նըմ, կը տանիմ, փարա լե չըմ յո՛ւղի:

Խանըմ անուշ-անուշ կը ծիծղա:

Խանըմն չառչեքն, ներսոն յետեքն, կէրթան, կէրթան, կը հաս-նին փողոց մե, մեծ տան դարգյայից ներս կը մտնան: Խանըմ զուր շարսավ կը թալե մեկ դեն, անուշ-անուշ կիշկե ներսոյին:

— Զը՛հել, — կըսե խանըմ, — սաղ քաղքի մեջ քու պես խորոտ մե չըմ տեսի: Իմ իրիկ քանիմ՝ ամիս մեռավ, մանցեր իմ օրբեվերի, ընձի չըս ա՛ռնի:

Ներսոն կըսե.

— Ես գեղացի-շալակտար, դու քաղքի խանըմ-խաթուն, էդի խելքի մոտ բա՛ն է՛:

Խանըմ կըսե.

— Մեռնի՛մ քու շանին, քու պես տղեն չորի՞ն շալակտարութեն էնե. էս խղեր հարստութեն ունիմ, արի տեր էղի, դառնանք իրիկ-կնիկ:

Ներսոյի սիրտ կը բղղորի, հմա ուրին կը պահե, կըսե.

— Խա՛նըմ, խոսք չըմ իտա, էրթամ խան, չոնի մկա իմ պապ ընձի կը բաքլե, ըսիմ ուրին, թե խարուկ էղավ՝ ես խարուկ ու խարուկ իմ:

— Գնա՛, — կըսե խանըմ:

Խանըմ թըղ նստի լա, Ներսոն ուրին վռազ-վռազ թալե խան:

— Տղա՛, դու չո՛ւր իս կորի, — կը հարցու հալվոր շալակտար:

— Պապե, վոլա, ըշտե հմլա-հմլա բա՛ն:

— Չէ՛, լա՛ո, — կըսե հալվոր շալակտար, — իմալ օր հավ չը կոնա որձ խազին կնիկ էղնի, հմալ էդ հարուստ խանըմ քըզի կնիկ շէղնի: Ընդոր աշխար ուրիշ է, քում ուրիշ:

— Աղե՛կ, — կըսե Ներսոն, — քըզի օր չը լսիմ՝ վի՛ր լսիմ:

Թզբեխի հատերու պես օր դընցնա վըր օրվան, առավոտմ՝ էլ դեւնան, օր գործի էրթան, կը լսին՝ դալալ կը կանչե.

— Սաֆարբիրլի՛ք՝ է, սաֆարբիրլի՛ք: Ուռումի թագավոր թալեր է վըր մըզի, կոի՛վ գուզե: Սուլթանի հրաման է՝ զենք վերցնող թըղ չիգա, կանի քոշկ ու սարի չառշե, զենք վերցու, էրթա կոիվ: Սաֆարբիրլի՛ք է, սաֆարբիրլի՛ք:

— Ուռումն ի՛նչ է, — կը հարցու Ներսոն:

— Ուռումն ազգ է, — կըսե հալվոր:

— Թո՛ւրք է, թե՛ քրիստոնա:

— Քրիստոնա է, ուր խաչ մեր խաչի պես է, մինակ քիչ մե օգոր:

Չարեն ի՛նչ. սուլթանի հրաման է, Ներսոն լե կէրթա կանի սուլթանի քոշկ ու սարի չառշե, թվանք մե կիտան ձեռք, կը խանին հըտ ուրիշներուն, կը դնին գամին, կը տանին հասուն Ուռումի էրկըրի մոտ, կը մտնա կոիվ: Կոի՛վ, ի՛նչ կոի՛վ՝ իմալ էրկու սար զարկ-վին չիրար, թոփ կը թնդա, թվանք կը պըրթա, թուր կը ճեվա, արուն յելի, զջանդըկներ կը քշե տանե: Խուրբան իմ Ներսոյին, ըզի կովի աշխարընցման վախտ, շատերու հետ, գընկնա գերի, ուռումներ կը տեսնան, օր էդի հայ քրիստոնա է, չըն շարչըրի, չըն սպանի, կըսին.

— Դու չորի՞ն իս չելի մեր դեմ կոիվ, ա՛ռ զքու թվանք. զարկ անօրեն թուրքին:

¹ Զօրահավաք (ծանոթութուն բանահավաքի):

— Կը զարկի՛մ ու վռլա աղե՛կ կը զարկիմ, անջախ է ֆուրսանդ՝
չընկի իմ ձեռն,—կըսե ներսոն:

Ներսոն է՝ կը մտնա կռիվ, շատ կտրըճութեն կէնա, կռիվն օր
կը վերջանա՝ կը տանին մըտ Ուռումի թագավոր: Թագավոր ըզոր
դոշից քանիմ՝ նշներ² կը կախե, կը վերցու մըշ ուր քոշկ ու սարին՝
ուր պաշտպան զինվորներու մեծ:

Հմա ներսոն վըր ըզոց ըսկի շո՛ւրախնա, ընդոր ուշք ու միտք
դըխ հալվոր շալակտարն է: Կապրի՞, թե՞ մեռեր է, էրկիր պտի էր-
թեր՝ գնա՞ց, մնա՞ց, ո՞ր դինա: Ուռումի հող քառսուն ծովով հեռու է
թուրքի քաղքից ու Մշու դեղրանուց: Ուր ախպըրտիք մկա ի՞նչ կէնին.
չըն փո՞շմընների, օր ուրին զրկին մալ ու մլքից, ո՞ր դինա: Կը մտա-
ծեր ներսոն, կը մտածեր, ու չըր կոնե հուն յելնա:

Խուլասա՝ առավոտ մե ներսոն աչք կը բանա, կը լսե, օր թագա-
վորի նազիր-վազիր դեղեր ին զթագավոր, մեռեր է, հըտ ըզոց մեկել
մեծամեծներ ժողովք կէնին, օր թագավոր ընտրին ուրանց: Վի՛ր
ընտրին, վի՛ն չընտրին, վեռչ գիկան էն մտքին, ո՞ն օր յառջի հեղ
մտնա քոշկ ու սարեն, զէնի ընտրին ուրանց թագավոր: Բախտն
հմալ կը բերե, օր ներսոն կը մտնա, նազիր-վազիր, մեկել մեծա-
մեծներ գելնան յոտքի, կըսին.

— Ըշտե ներսոն մըզի թագավոր:

Ջներսոն կը դառնուն թագավոր, թագ կը դնին գլուխ, կը նըս-
տըցուն վըր թախտին: Նազիր-վազիր, մեծամեծներ կը մտնան, գել-
նան, կէրթան, գիկան, ըզոր քաղցր-քաղցր խոսքեր կըսին, կը դո-
վան, կը հանին շուրի էրկինք, ամեկ գուզե բան մե փրցու ըզրեն՝
հող, փարա, նշան, ե՛սիմ, թագավորին քի՞չ կա հմալ բաներ:

Հմա ներսո նիաթ ըսկի չը բացվի, զընկնա մըջ գարտ ու ցավին:
Թագավոր՝ թագավոր, կը մտածե. էրկիր ի՛մալ պտի կառավարե,
շա՞տ կը մտածե, կիտա-կառնե, ծափ կը զարկե, հըտ զարկելուն՝
քանիմ՝ մարդ տի՛թ կը կանին ուր յառեջ.

— Տղեկներ,—կըսե,—շուտ մե գացեք Մշու դաշտ, Թիլ գեղ,
ես չունի Պողոս անունով հոգեհեր մե ոնիմ, ըսեք մեր էրկրի թագա-
վոր ներսոն գուզե յիմնա, զերկիր ի՛մալ կառավարե: Դե, գացեք:

էդ մարդիկ կը հեծնան ուրանց ձիեր՝ խառ կը քշին, գիկա՞ն, գի-
կա՞ն, գիկա՞ն, կը հասնին Մշու դաշտ, Թիլ գեղի մեջ կը կանին, կը
հարցուն.

— Մեր ներսո թագավորի հոգեհեր Պողոսին մըզի տարեք:

¹ Առիթ, պատեհութուն (Մ. Բ.):

² Շքանշաններ (Մ. Բ.):

Գեղացիք կանին զըդոց կը տանին խարիբութենն նոր դար-
ձած հալվորու մոտ: Թագավորի մարդիկ կըսին.

— Քե՛ռի Պողոս, ըշտե հմլա-հմլա բա՛ն:

Հալվոր ձեն չը հանե, կանե ըդոց կը տանե բոստան, լանգով
է՛ս քալմի գլուխ կը թոցու, է՛ն քալմի գլուխ կը թոցու, ես ըսիմ՝
տաս, դու ըսե՛ հազար, կը թոցու, կը դանա թագավորի մարդոց
կըսե.

— Ինչ տեսաք՝ գացեք ըսեք ձեր թագավորին:

էդ ձիավորներ կը դառնան գիկան ուռումի մեծ քաղաք, կը
մտնան քոշկ ու սարեն, ծնդրիկ կը զարկին թագավորի յառեջ,
ուրանց տեսած կը պատմին: Ներսոն մըջ մտքին կըսե. «Թե գուզիս
էրկիր աղեկ կառավարիս ու դու լե ըհաթ մնաս՝ քու դուժմըններու
գլխըներ քալմու գլխըներու պես թուս:

Ներսոն հմալ լե կէնե:

Ժամանակ մե գընցնա, Ներսոն չը սթրի վրը թախտին՝ ուլ
ուշք ու միտք գիշեր-ցերեկ վըր հալվորուն ու վըր ախարտոց կը
դառնա: Մալու կը նստի փանջարի դեմ, միտք կէնե, միտք, ու քանի
կէրթա՝ քուն կը պակսի աչքերուց:

— Ջա՛նըմ,—կըսե,—թագավոր՝ թագավոր, կանի ես լե յիլ-
նամ էրթամ մեր գեղ, զհալվորն ու իմ ախարտիք տեսնամ, ընդոց
հալ ու վախթ հարցում, դառնամ յիգամ, աշխար մեռնել կա:

Կըսե, կը հեծնա ուր ձին, էրկու բեռ օսկի կը վերցու հըտ ուրին,
քոմ մե ձիավոր կէցկե ուր յետե, Թի՛լ, յո՛ւր իս, էկա՛, խառ կը քշե,
գիկա՛, գիկա՛, գիկա՛, կը հասնի Թիլ, ուրանց դոան յառջե կը
կանի, կը տեսնա՝ հանդե մեծ ախպեր ու միջնեկ ախպեր յերես
ուրանց շրջած, ըռըկուկ, ամեկ դեն մե նստուկ ին: Ախպըրտիք կը
տեսնան հանդե ջըհել մե, թագավորի շորեր հագուկ, իմալ սուրբ
Սարգիս, ձին ամպերու հետ կը խաղա, կաներ է ուրանց յառեջ:
Ըգոք զՆերսոն չըն ճանչնա: Ներսոն բարե կիտա, բարե կանե, ախ-
պըրտոց կը հարցու.

— Դուք ֆլան մարդու տղեկներ չի՞ք:

— Հա՛, տղեկներն ինք:

— Ձեր պապն յո՛ւր է:

— Մեր պապ շուտո՞ւց է մեռի:

— Ձըզի պզտիկ ախպեր մ՛ունե՞ք:

— Ունենք:

— Անունն ի՞նչ էր:

— Ներսո:

— Կա՛նչեք թըղ յիգա:

— Ի՛մալ կանչինք, խուրբան, քանիմ՝ տարի յառեջ մըգնե
ըռրկավ, թորկեց գնաց, մկա չընք դինա սա՞ղ է, թե՛ մեռած:

Ներսոն կը դառնա ուր ձիավորներուց մեկին:

— Գնա զհալվոր Պողոս առ արի:

Ձիավոր կէրթա.

Ներսոն կը դառնա ախպրտոց.

— Է՛, ըսեք սա՛նք, ձեր հալ ու վախթն ի՛մալ է:

Միջնեկ ախպեր կըսե.

— Ի՛նչ հալ, ի՛նչ վախթ, խուրբան: Մեր պապու մեռնելուց
յետև՝ ես ու իմ մեծ ախպեր հըտ չիրար կապրենք, մենք ու մեր
կնկտիք լեզու չը գտանք, կովանք, բաժնվանք, մկա ո՛չ հաց, ո՛չ
թաց, գեղի չետին խեղճն ինք:

— Ձեր ախպեր ձրղի չօ՞գներ:

— Ո՞ր ախպեր:

— Պզտիկ ախպեր:

— Ի՛նչ պզտիկ ախպեր: Ջա՛նըմ, սատանեն մտավ մըջ մըզի,
ընդրան զրկինք ժառանգութենեն, էն լե զգլուխ առավ դնաց, էն
գնալն է օր գնաց, չը գինանք կա-չկա, յուր է, քոռներ մեր էրկու
լուա, հմալ բան չէնենք:

Ներսոն գերես կը դարձու մեկ դեն, անջախ կը զսպե ուրին:

Ձիավոր զհալվորն առած՝ կը բերե կանգըցու ներսո յառեջ:

— Բարև, պա՛պե, ի՛մալ իս:

— Բարին արևուդ, ջըհել, ըշտե կապրինք:

Կըսե հալվոր, զձեռք կը դնե ճակտին, կիշկե, կիշկե, մեկ լե կը
ճանչնա ղներսոն:

— Յա՛, նե՛րսո, մեռնիմ քըղի, դո՞ւ իս:

— Ե՛ս իմ, իմ հոգեհեր:

— Քու խլըխին կիշկիմ՝ կը զարմանամ, տղա՛, չէղնի՞ թագա-
վոր իս դառձի:

— Հա՛, վո՛լա, թագավոր իմ դառձի:

Ներսոն կը թոնա ձիուց գիջնա, ինք ու հալվոր կը փաթվին չի-
րար: Հալվոր կըսե.

— Ըպա օր կըսինք՝ աստված մեկ դուռ կը փակե, հազար կը
բանա, գու ընձի չըր ավտնի: Տեսա՞ր իմալ գառձար թագավոր: Քու
չոտաց մեռնիմ, քե՛լե, քու քոմով էրթանք տուն, իմ պառվուկ հմա՛լ
Մշոռ քուֆթե մե էփի՛ մատներդի հետ կուտիս:

— Կէ՛րթանք, կէ՛րթանք, հլա քիչ մե համբերե, չոդա գործ կա:

Ներսոն հրաման կիտա, որ զօսկու բեռներ չիջուն, օր գիշուն՝
կը դառնա հալվորուն:

— Իմ ազի՛զ հոգեհեր, իդա էրկու բեռ օսկին իմ յառեջ կը բաժ-
նիս մըջ քրզի ու իմ ախարրտոց, էդ սևերեսներուն: Քազավորական
հրամանք է՝ հարիր օսկուց ինսուն քումն է, հինգն իմ մեծ ախարր,
հինգն իմ միջնեկ ախարր:

Քազավորն իմալ ըսեր էր՝ հալվորն զօսկին կը բաժնե, կառնե
ըգոր ու ուր քոմ կը տանե տուն: Մեծ ախարր ու միջնեկ ախարր
կիշկին չիրար, խոսք չըն կռնի գտնա, կէրթան տներ ուրանց, զգլուխ
ուրանց կը տփին, թե յորի՞ն հմալ օղյաթ խաղցան պզտիկ ախարր
զլուխ, չըմքի նո՛ր հասկըցան, թե մարդ կը մեռնե՝ անուն կը մնա,
եզն սատկի՛ կաշին կը մնա:

